ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ

2015թ-ի հունվարից մինչև օգոստոսի 20-ը Բյուրեղավան համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները:

-Սոցիալապես անապահով , զոհված զինծառայողների ազատամարտիկների 151 ընտանիքների տրամադրվել է ֆինանսական աջակցություն :

- Բյուրեղավանի «Հայրենադարձ» թաղամասի վագոն տնակում բնակվող բազմազավակ Ջիրավարդ Ղուլյանին և իր 8 անչափահաս երեխաներին հատկացրել է 2-րդ վագոն տնակը՝ 18քմ տարածքով, ինչի համար համայնքի բյուջեից հատկացվել է 330 հազար դրամ:

- Գյուլումյան Սոլմազի 4 հոգուց բաղկացած ընտանիքին որոնցից 2–ը հաշմանդամ են համայնքի ավագանու որոշմամբ՝ 48շենքում (նախկին 2-րդ հանրակացարան) ընտանիքին տրամադրվել է 13քմ տարածքով սենյակ:

-Եղեռնի զոհերի 100-րդ տարելիցին ընդառաջ կազմակերպվել է՝

- «100 ծառ՝ 100-րդ տարելիցին» խորագրով ծառատունկ քաղաքի տարածքում ,

- Մասնակցություն Խնկո Ապոր անվան գրադարանում կազմակերպված «100 ողողանջ» խորագրով միջոցառմանը՝ քաղաքապետարանի հովանավորությամբ հիմնական դպրոցի 30 աշակերտների հետ:

- Ձահերով երթ դեպի հուշահամալիր, ոգեկոչման արարողություն և սրբադասման կարգ:

- Ապրիլ ամսին համայնքի բյուջեից 4 միլիոն 900 հազար դրամ ներդրվել է բազմաբնակարան շենքի 3 վերելակի հիմնանորոգման աշխատանքների համար: Բյուրեղավան քաղաքում այսօր գործում են բոլոր՝ 43 բազմաբնակարան բարձրահարկ բնակելի շենքերի վերելակները:

-Սկսվել է Բյուրղավանի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքները և շարունակվում է: Ավելացվել է նոր կցակառույց: Շինարարական աշխատանքների համար ծախսվել է 16 միլիոն 200 հազար դրամ:

- 2015 թվականի աշխատանքային ծրագրով կատարվել է ներհամայնքային ճանապարհների վերանորոգման և ասֆալտապատման աշխատանքներ: Աշխատանքներն իրականացնելու համար համայնքի բյուջեից ծախսվել է 21 միլիոն 500 հազար դրամ:

Կնքվել է 18 միլիոն 280 հազար 420 դրամ արժողությամբ պայմանագիր «Բալահովիտ 1» ՍՊԸ-ի հետ: Աշխատանքներ կատարվել են քաղաքի կենտրոնական և հիմնական փողոցներում, շենքերի բակերում: Ընդհանուր հաշվով վերանորոգվել է 2612 քմ տարածք:

Կազմակերպվել է համաքաղաքային մեծ միջոցառում նվիրված Մայիսի 9-ի Մեծ հաղթանակի 70 և Շուշիի ազատագրման 23 ամյակներին:

-<<Արև>> մանկապարտեզի սաները մասնակցել են <<Սպորտլանդիա 2015>> միջոցառման մարզային փուլին:

-Մայիսի 28-ին Լուսակերտի N զորամասում տոնական համերգ է անցկացվել՝ նվիրված առաջին հանրապետության տոնին՝ արվեստի, ավագ դպրոցի և քաղաքի շնորհալի երիտասարդների մասնակցությամբ:

-Բյուրեղավանի կետրոնական կանգառում՝ 10 քմ տարածքում, տեղադրվել է կանգառասրահ: Հարմարավետ է, տեղադրված է նստարան և աղբաման, որի համար ծախսվել է 565 հազար դրամ:

-ՀՀ նախագահի սահմանած <<Լավագույն մարզական ընտանիք>> համայնքային փուլի անցկացում համայնքում, 36 ընտանիքի մասնակցություն, 3 ընտանիք անցել են հանրապետական փուլ:

-«Կոտայք Բազե 2015»-ին համայնքից 7 երիտասարդի մասնակցություն: Համայնքի միջոցներով մարզային փուլի մասնակցության համար ծախսվել է 360 հազար դրամ:

-Սփյուռքի նախարարության «Արի տուն 2015» ծրագրով երեխաների հյուրընկալության կազմակերպում բյուրեղավանցի ընտանիքների կողմից:

-Մասնակցություն համահայկական խաղերին, որի համար քաղաքապետարանի բյուջեից ծախսվել է 1 միլիոն 400 հազար դրամ: